«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 3
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 4
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 5
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	1,863	1,939
Ոչ նյութական ակտիվներ	6	2,925	28
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		-	1,800
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**4,788**	**3,767**
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրական դեբիտորական պարտքեր	7	8,571	5,692
Տրված կանխավճարներ		-	142
Դրամական միջոցներ	8	17,080	5,362
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**25,651**	**11,196**
Ընդամենը ակտիվներ		**30,439**	**14,963**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	9	333	333
Կուտակված շահույթ		18,668	5,548
Ընդամենը սեփական կապիտալ		**19,001**	**5,881**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր		-	1,131
Առևտրական կրեդիտորական պարտքեր		1,332	220
Ստացված կանխավճարներ		356	580
Աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստներ		1,062	2,570
Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ՝ բացի շահութահարկից		5,760	3,969
Շահութահարկի գծով պարտավորություն		2,928	612
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**11,438**	**9,082**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**30,439**	**14,963**

Տարոն Վարազդատյան
Տնօրեն

Զարինե Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» "KMG CONSULTING" "КЕЙЭМДЖИ КОНСАЛТИНГ" 02647331

28.04.2023թ.

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթ.	2022թ.	2021թ.
Հասույթ	10	81,105	40,783
Այլ եկամուտներ		145	646
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր		(42,002)	(28,590)
Մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսեր	11	(12,111)	(1,741)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(2,204)	(1,638)
Մարքեթինգի և գովազդի ծախսեր		(2,040)	(2,175)
Տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսեր		(1,667)	(666)
Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ծախսեր		(513)	(717)
ՀԱՊ անդամակցության հետ կապված ծախսեր		(478)	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		(346)	(259)
Տոկոսային ծախսեր		(42)	(236)
Գործուղման ծախսեր		-	(2,269)
Այլ ծախսեր		(274)	(295)
Շահույթ մինչև հարկումը		**19,573**	**2,843**
Շահութահարկի գծով ծախս	12	(3,295)	(612)
Տարվա շահույթ		**16,278**	**2,231**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**16,278**	**2,231**

Տարոն Վարազդատյան

Տնօրեն

«ՔԵՅԷՄԶԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» "KMG CONSULTING" "КЕЙЭМДЖИ КОНСАЛТИНГ" 02647331

Նարինե Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

28.04.2023թ.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2021թ.	3	9,917	9,920
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	2,231	2,231
Շահաբաժինների հայտարարում	-	(6,600)	(6,600)
Կապիտալի համալրում	330	-	330
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	333	5,548	5,881

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2022թ.	333	5,548	5,881
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	16,278	16,278
Շահաբաժինների հայտարարում	-	(3,158)	(3,158)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	333	18,668	19,001

Տարոն Վարազդատյան

Տնօրեն

Նարինե Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

28.04.2023թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված մուտքեր	92,758	47,564
Այլ մուտքեր	13	409
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(42,575)	(25,135)
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(18,756)	(7,331)
Վճարումներ գործուղումների գծով	-	(2,269)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(12,795)	(6,265)
Վճարված շահութահարկ	(979)	-
ՀԱՊ անդամակցության հետ կապված վճարումներ	(478)	-
Այլ ելքեր	(146)	(39)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**17,042**	**6,934**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(1,301)	(3,718)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	108	-
Փոխառությունների տրամադրումից ելքեր	-	(6,500)
Տրամադրված փոխառությունների մարումից մուտքեր	-	6,500
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(1,193)**	**(3,718)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերի մարումից ելքեր	(1,131)	(1,776)
Շահաբաժինների վճարումից ելքեր	(3,000)	(6,270)
Կանոնադրական կապիտալի համալրումից մուտքեր	-	330
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(4,131)**	**(7,716)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**11,718**	**(4,500)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	-	-
Դրամական միջոցների մնացորդն ըստ 01 հունվարի	**5,362**	**9,862**
Դրամական միջոցների մնացորդն ըստ 31 դեկտեմբերի	**17,080**	**5,362**

Տարոն Վարազդատյան

Տնօրեն

Նարինե Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

28.04.2023թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մաս կազմող՝ 7-ից 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ:

2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկատվություն

ա) Ընկերության մասին

«ՔԵՅԷՄՔԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով, Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի և ՀԱՊ իրավական ակտերով, ՀՀ իրավական այլ ակտերով և Ընկերության կանոնադրությամբ:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժնի կողմից 2016 թվականի մարտի 25-ին:

Ընկերության

Կրճատ անվանումը՝	«ՔԵՅԷՄՔԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
Պետական գրանցման համարը՝	273.110.893320
Պետական գրանցման ամսաթիվը՝	25.03.2016թ.
Գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝	ՀՀ, 0009, ք. Երևան, Աբովյան փ. 41շ., թիվ 5
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)՝	02647331
ՀԱՊ հիմնական գրանցման գրառման համարը (ՀԳԳՀ)՝	1 22 0666
Պաշտոնական ինտերնետային կայքէջը՝	www.kmg.am
Էլեկտրոնային փոստի հասցեն՝	info@kmg.am
Կոնտակտային հեռախոսահամարը՝	+374 (10) 581958

Ընկերությունը գործունեություն է իրականացնում ստորև նշված հիմնական ուղղություններով.

- աուդիտ և հարակից ծառայություններ,
- հաշվապահական և հարկային հաշվառում,
- ֆինանսական և կառավարչական (այդ թվում՝ բիզնես և հարկային) խորհրդատվություն,
- իրավաբանական սպասարկում,
- պետական գնումների աջակցում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» հասարակական կազմակերպության (կրճատ՝ ՀԱՊ) խորհրդի 2022 թվականի փետրվարի 8-ի N 2-Ա որոշմամբ Ընկերությունն անդամակցել է մասնագիտացված մարմնին, և նրա վերաբերյալ տվյալները ներառվել են մասնագիտացված մարմնի կողմից վարվող ռեեստրում 2022 թվականի փետրվարի 10-ին: Այդ ամսաթվից սկսված, Ընկերությանն իրավունք է վերապահվել իրականացնել աուդիտորական գործունեություն:

Ընկերության աշխատակիցների թվաքանակն առ 31.12.2022թ. կազմել է 12 հոգի (31.12.2021թ.՝ 11 հոգի):

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 333,000 (երեք հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 2 (հատ) բաժնեմասերի, որոնք ամբողջությամբ տեղաբաշխված են և լրիվ վճարված: Բաժնեմասերի անվանական արժեքները կազմում են 266,400 (երկու հարյուր վաթսունվեց հազար չորս

հարյուր) ՀՀ դրամ (4/5 կամ 80%), որը պատկանում է որակավորված աուդիտոր, ՀՀ քաղաքացի Կառլեն Գագիկի Խաչատրյանին (ՀԳԳՀ՝ 2 21 0654) և 66,600 (վաթսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ (1/5 կամ 20%), որը պատկանում է որակավորված աուդիտոր, ՀՀ քաղաքացի Տարոն Սիրակի Վարազդատյանին (ՀԳԳՀ՝ 2 20 0015), ով միաժամանակ հանդիսանում է նաև Ընկերության տնօրենը:

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1 Հայտարարություն համապատասխանության մասին

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հրապարակած և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան:

2.2 Չափման հիմունքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (կրճատ՝ դրամ), որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Ստորագրումը

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 2023 թվականի ապրիլի 28-ին և նույն ամսաթվին ստորագրվել հրապարակման համար Ընկերության տնօրեն Տարոն Վարազդատյանի և Ընկերության գլխավոր հաշվապահ Նարինե Հակոբյանի կողմից:

3. Գնահատումներ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով Ընկերության ղեկավարությունը կատարում է գնահատումներ և դատողություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ակտիվների և պարտավորությունների ու եկամուտների և ծախսերի մեծության վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները և դրանց համար հիմք հանդիսացող ենթադրությունները կանոնավոր կերպով վերանայվում են:

Հաշվապահական գնահատումների փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց՝ համապատասխանաբար ճանաչվելով այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել են փոփոխությունները, իսկ փոփոխությունները հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների վրա ազդելու դեպքում, ճանաչվում են նաև այդ ժամանակաշրջաններում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիր

4.1 Հիմնական միջոցներ

i. Ճանաչում և չափում

Հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին չափվում է իր սկզբնական արժեքով:

Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է՝

ա) գնման գինը, ներառյալ իրավաբանական և բրոքերային ծառայությունների դիմաց վճարները, ներկրման տուրքերը և գնման չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները.

բ) ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում.

գ) միավորի ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնական գնահատված ծախսումները:

Հիմնական միջոցների միավորները սկզբնական ճանաչումից հետո չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

ii. Մաշվածություն

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես ակտիվի արժեքի մաս:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է: Մաշվածության հաշվարկը չի դադարեցվում այն դեպքում, երբ ակտիվը գտնվում է պարապուրդի մեջ կամ հանվում է ակտիվ օգտագործումից, բացառությամբ եթե ակտիվն ամբողջությամբ մաշվել է:

Ակտիվի մաշվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է այդ ակտիվի գծով գնահատված օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Հիմնական միջոցների գծով գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

➢ Համակարգչային տեխնիկա	5 տարի
➢ Տնտեսական և գրասենյակային գույք	8 տարի
➢ Այլ հիմնական միջոցներ	8 տարի

4.2 Ոչ նյութական ակտիվներ

i. Ճանաչում և չափում

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

ա) գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները.

բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսում:

Ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

ii. *Ամորտիզացիա*

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես ակտիվի արժեքի մաս:

Ամորտիզացիան սկսում է հաշվարկվել, երբ ոչ նյութական ակտիվը մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ամորտիզացիայի հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է այդ ակտիվի գծով գնահատված օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Ոչ նյութական ակտիվների գծով գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Համակարգչային ծրագրեր 5 տարի
- Ապրանքային նշան 10 տարի

4.3 *Դեբիտորական և կրեդիտորական պարտքեր*

i. *Առևտրական դեբիտորական պարտքեր*

Առևտրական դեբիտորական պարտքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ ստանալու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Ընկերության կողմից մատուցվող ծառայությունները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով՝ առանց նշանակալի ժամանակահատվածով պարտքի տարաժամկետման հնարավորության: Դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն:

Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ առևտրական դեբիտորական պարտքերի գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորուստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ii. *Առևտրական կրեդիտորական պարտքեր*

Առևտրական կրեդիտորական պարտքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ վճարելու իրավաբանորեն ամրագրված պարտավորություն:

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով պարտականություններ են՝ առանց նշանակալի ժամանակահատվածով պարտավորության տարաժամկետ մարման հնարավորության և տոկոսակիր չեն:

4.4 *Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ*

Աշխատակիցների բոլոր այն հատուցումների ծախսումները, որոնց նկատմամբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը ծառայություններ մատուցելու արդյունքում ձեռք են բերել իրավունք, ճանաչվում են՝

ա) որպես պարտավորություն, աշխատակցին ուղղակիորեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե վճարված գումարը գերազանցում է մինչև հաշվետու ամսաթիվը մատուցած ծառայությունից առաջացած պարտականության գումարը, Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի. և

բ) որպես ծախս, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՄ-ի մեկ այլ բաժնով պահանջվում է, որ ծախսումը ճանաչվի որպես ակտիվի արժեքի մաս:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են՝

i. աշխատավարձը,
ii. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին են վճարովի տարեկան հասանելիք արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության ու մայրության նպաստը,
iii. պարգևավճարները, լրավճարները և այլ հավելումները,
iv. առողջության (բժշկական) ապահովագրությունը:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է նրանց հետագա փոխհատուցելի բացակայությունների իրավունքը: Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է չզեղչված լրացուցիչ գումարով, որը Ընկերությունն ակնկալում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքի արդյունքում:

4.5 <u>Պահուստներ</u>

Ընկերությունը պահուստը ճանաչում է միայն այն դեպքում, երբ՝

ա) հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ պարտականությունը մարելու համար Ընկերությունից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.

գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Ընկերությունը պահուստը չափում է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որն Ընկերությունը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար

Ընկերությունը պահուստը ճանաչում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն և պահուստի գումարը որպես ծախս, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՄ-ի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես որևէ ակտիվի ինքնարժեքի մաս:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում և ճշգրտում է պահուստները՝ այդ հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու նպատակով: Նախկինում ճանաչված գումարների ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե պահուստը սկզբնապես ճանաչվել էր որպես ակտիվի արժեքի մաս:

4.6 <u>Հասույթ</u>

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը ճանաչում է գործարքից հասույթը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա (ավարտվածության տոկոսի որոշման մեթոդի համաձայն): Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Ավարտվածության աստիճանը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ պայմանագրի գծով կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը ճանաչում է հասույթը միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

4.7 Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի և հետաձգված հարկի հանրագումարը:

i. Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկվող շահույթի հիման վրա:

Ընկերությունը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Ընկերությունն այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Ընկերությունն ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալում է, որ կվճարի (կփոխհատուցի)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային օրենսդրությունը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

ii. Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը որոշվում է ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գուդվիլի սկզբնական ճանաչումից, կամ

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը՝

բ (i) ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և

բ (ii) գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը՝

ա) ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և

բ) այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Ընկերությունը հետաձգված հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է՝ կիրառելով հարկի դրույքները և հարկային օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Այդուհանդերձ, Ընկերությունը հետաձգված հարկային պարտավորություն (ակտիվ) և համապատասխանաբար ծախս (եկամուտ) չի ճանաչում, երբ դրանք ոչ նշանակալի (չնչին) չափով ազդեցություն կարող են ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա	Տնտեսական և գրասենյակային գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք				
Մնացորդ առ 01.01.2021թ.	610	1,245	-	1,855
Ավելացում	1,171	272	174	1,617
Պակասեցում	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2021թ.	1,781	1,517	174	3,472
Մնացորդ առ 01.01.2022թ.	1,781	1,517	174	3,472
Ավելացում	322	-	12	334
Պակասեցում	(185)	-	-	(185)
Մնացորդ առ 31.12.2022թ.	1,918	1,517	186	3,621
Մաշվածություն				
Մնացորդ առ 01.01.2021թ.	377	442	-	819
Տարվա մաշվածություն	459	227	28	714
Պակասեցում	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2021թ.	836	669	28	1,533
Մնացորդ առ 01.01.2022թ.	836	669	28	1,533
Տարվա մաշվածություն	251	128	31	410
Պակասեցում	(185)	-	-	(185)
Մնացորդ առ 31.12.2022թ.	902	797	59	1,758
Հաշվեկշռային արժեք				
Առ 31.12.2021թ.	**945**	**848**	**146**	**1,939**
Առ 31.12.2022թ.	**1,016**	**720**	**127**	**1,863**

6. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Ապրանքային նշան	Ընդամենը
Արժեք			
Մնացորդ առ 01.01.2021թ.	-	18	18
Ավելացում	-	12	12
Մնացորդ առ 31.12.2021թ.	-	30	30
Մնացորդ առ 01.01.2022թ.	-	30	30
Ավելացում	3,000	-	3,000
Մնացորդ առ 31.12.2022թ.	3,000	30	3,030

Ամորտիզացիա			
Մնացորդ առ 01.01.2021թ.	-	-	-
Տարվա ամորտիզացիա	-	2	2
Մնացորդ առ 31.12.2021թ.	-	2	2
Մնացորդ առ 01.01.2022թ.	-	2	2
Տարվա ամորտիզացիա	100	3	103
Մնացորդ առ 31.12.2022թ.	100	5	105
Հաշվեկշռային արժեք			
Առ 31.12.2021թ.	-	**28**	**28**
Առ 31.12.2022թ.	**2,900**	**25**	**2,925**

7. Առևտրական դեբիտորական պարտքեր

Առևտրական դեբիտորական պարտքերը, համաձայն ծառայությունների մատուցման պայմանագրերի, հիմնականում ենթակա են վճարման յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա ընթացքում: Դեբիտորական պարտքերի հավաքագրելիության ժամանակահատվածը տարվա ընթացքում միջինացված կազմում է 1-2 ամիս: Առևտրական դեբիտորական պարտքերի գծով առկա չեն ապահովման միջոցներ:

8. Դրամական միջոցներ

Հազար դրամ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
Ընթացիկ հաշվի մնացորդ առևտրային բանկում՝ ՀՀ դրամով	17,036	5,326
Քարտային հաշվի մնացորդ առևտրային բանկում՝ ՀՀ դրամով	44	36
Ընդամենը	**17,080**	**5,362**

Հաշվետու ամսաթվի դրությամբ (31.12.2021թ. դրությամբ՝ ևս) դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում առկա չէ:

9. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալի վերաբերյալ մանրամասները ներկայացված են Ծնթ. 1-ում: Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել: 2021 թվականի ընթացքում Ընկերության կանոնադրական կապիտալը համալրվել է 330 հազար դրամով՝ կազմելով 333 հազար դրամ:

10. Հասույթ

Հազար դրամ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
Աուդիտի և հարակից ծառայությունների մատուցումից	11,837	-
Հաշվապահական ծառայությունների մատուցումից	49,324	21,779
Իրավաբանական ծառայությունների մատուցումից	2,013	533
Գնումների ծառայությունների մատուցումից	5,159	6,452
Խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումից	12,772	12,019
Ընդամենը	**81,105**	**40,783**

11. Մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսեր

Այս հոդվածում ներառված գումարները հիմնականում իրենցից ներկայացնում են Ընկերության կողմից

մատուցվող ծառայությունների շրջանակներում ներգրավված Ընկերության աշխատակից չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց գծով կատարված հատուցումները:

12. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	3,295	612
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)	-	-
	3,295	**612**

Ընկերության համար կիրառվող շահութահարկի դրույքաչափը 18% է (2021թ.՝ 18%):

Ընկերությունը հետաձգված հարկերի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա համարել է ոչ էական և դրանց գծով եկամուտ (ծախս) ու համապատասխանաբար ակտիվ (պարտավորություն) չի ճանաչել: Ընդ որում՝ չճանաչված հետաձգված հարկային ակտիվները ոչ նշանակալի (չնչին) չափով կգերազանցեին չճանաչված հետաձգված հարկային պարտավորություններին:

Շահութահարկի փաստացի (արդյունքային) դրույքի համապատասխանեցում.

Հազար դրամ	2022թ.	%	2021թ.	%
Շահույթ՝ մինչև հարկումը	19,573		2,843	
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքաչափով	3,523	18.0	512	18.0
Զուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	(228)	(1.2)	100	3.5
	3,295	**16.8**	**612**	**21.5**

13. Կապակցված կողմերի հետ գործարքներ

13.1 Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը մայր կազմակերպություն չունի: Ընկերության բաժնեմասերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծնթ. 1-ում: Ընկերությանը կապակցված կողմեր են հանդիսանում Ընկերության բաժնեմասերի սեփականատերերը:

13.2 Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումներ

Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Աշխատակիցների հատուցումներ	13,847	8,962

13.3 Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

	Գործարքի գումար		Ստացված մնացորդ	
Հազար դրամ	2022թ.	2021թ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
Տրամադրված փոխառություններ	-	6,500	-	-
Տրամադրված փոխառությունների մարում	-	(6,500)	-	-
Ստացված վարձակալություններ	1,667	666	-	-
Ստացված վարձակալությունների վճարում	(1,667)	(666)	-	-

14. Պայմանական դեպքեր

14.1 Դատական գործեր

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ և մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատման (ստորագրման) ամսաթիվն ընկած ժամանակահատվածում Ընկերության դեմ ներկայացված դատական հայցեր չեն եղել:

14.2 Երաշխավորություններ

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ Ընկերությունը տրամադրած երաշխավորություններ չի ունեցել:

14.3 Ապահովագրություն

Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր դեպքերի արդյունքում առաջացող վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանության միջոցներ ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է նշանակալիորեն բացասական ազդեցություն թողնել Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի ու ֆինանսական արդյունքների վրա:

14.4 Հարկային օրենսդրության անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում բնորոշվում է օրենսդրական պարբերաբար փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ առնվազն տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկները, հաշվետվություններն ու հայտարարագրերը և իրավունք ունեն առաջադրելու լրացուցիչ հարկային պարտավորություններ, ինչպես նաև նշանակելու տույժեր ու տուգանքներ:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե հարկային մարմինները կարողանան հիմնավորել ու պարտադրել իրենց մեկնաբանություններն ու տեսակետները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

15. Հաշվետու ամսաթվից (ժամանակաշրջանից) հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատման (ստորագրման) ամսաթիվն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այնպիսի էական դեպքեր, որոնց գծով ֆինանսական հաշվետվություններում պետք է կատարվեին ճշգրտումներ կամ լրացուցիչ բացահայտումներ:

Տարոն Վարազդատյան

Տնօրեն

Նարինե Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» "KMG CONSULTING" "КЕЙЭМДЖИ КОНСАЛТИНГ" 02647331

20.04.2023թ.